

**ԿԸՀ նախագահը վստահ է՝ նույնականացման քարտով կրկնաքվեարկությունը  
բացառվելու է  
19 նոյեմբերի 2015**

«Նույնականացման քարտերի» մասին օրենքում վերջերս կատարված փոփոխությունը այսօրվանից մտնում է ուժի մեջ, ինչը նշանակում է, որ բացառապես նույնականացման քարտ ունեցող 183 հազար քաղաքացիները կարող են ընտրություն կատարել կամ մասնակցել հանրաքվեի քվեարկությանը:

**Panorama.am**-ի թղթակցի հետ զրույցում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ **Տիգրան Մուկույանը** տեղեկացրեց, որ այս օրերին հանրապետության մարզերում ընթացող տեղամասային հանձնաժողովների անդամների ուսուցման ժամանակ նրանց ներկայացվում են նույնականացման քարտով քվեարկության ձևերը, պահանջները: Բացի այդ, մինչև այս շաբաթվա վերջ հեռուստաընկերություններով սոցիալական գովազդ կներկայացվի նույնականացման քարտերով քվեարկության ձևերի մասին:

**«Հանձնաժողովների անդամների համար պատրաստվել է ուղեցույց, որը տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից կտրամադրվի նրանց: Ուղեցույցի մեջ պարզաբանվում, ներկայացվում են Ընտրական օրենսգրքի, Հանրաքվեի մասին օրենքների կանոնակարգումները, ինչպես նաև նույնականացման քարտով քվեարկության կազմակերպման ձևերը»**, - ներկայացրեց պարոն Մուկույանը:

Ինչ վերաբերում է նույնականացման կամ ID քարտերով քվեարկությանը, ապա դա արվելու է հետևյալ կերպ. նույնականացման քարտը չի դրոշմակնքվելու, ընտրողների ցուցակում լրացվելու է ընտրողի քարտի համարը, այնուհետև ընտրողների ցուցակի համապատասխան հատվածում կատարվելու է նշում, որ անձը քվեարկությանը մասնակցել է նույնականացման քարտով: Մուկույանի խոսքով, հետագայում այդ տեղեկությունները ամփոփվելու են և հետո Կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրությունների մեջ առանձին տողով նշվելու է, թե նույնականացման քարտ ունեցող քաղաքացիներից քանիսն են մասնակցել քվեարկությանը:

Մեր հարցին, թե դա բացառելու է նույնականացման քարտ ունեցող քաղաքացու կողմից կրկնաքվեարկությունը, ԿԸՀ նախագահը պատասխանեց կտրուկ. «Բացառելու է»:

Հիմնավորելով ասածը, Մուկույանը մատնանշեց ընտրողների ցուցակը, որով «աննախադեպ հրապարակայնություն է ապահովվելու»:

**«Ընտրողների ցուցակը միշտ հրապարակված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում՝ որոնման հնարավորությամբ: Մենք նաև դեռ նախորդ համապետական ընտրություններից ունենք կարևորագույն գործիք՝ կարող ենք կայքում տեսնել, թե տվյալ հասցեում ուրիշ ովքեր են հաշվառված: Այս տվյալներով ցուցակը տարեկան երկու անգամ թարմացվում է: Բացի այդ, ընտրողների ցուցակը կարելի է ներբեռնել ոստիկանության պաշտոնական կայքից: Ի դեպ, դրանք այնպիսի ծրագրային միջոցներով են կազմված, որ կարելի է ամենատարբեր որոնումներ, ուսումնասիրություններ իրականացնել, կարելի է գտնել համընկնումներ»**, - ներկայացրեց ԿԸՀ նախագահը:

Նույնականացման քարտի մասին օրենքում փոփոխությունները, որոնց համաձայն քարտն ունեցողները կարող են մասնակցել ընտրություններին, ԱԺ-ում ընդունվեց խորհրդարանական ընդդիմության դժգոհություններով. կողմ էր միայն իշխանական

մեծամասնությունը, իսկ ընդդիմությունը պահանջում էր նույնականացման քարտ ունեցող և քվեարկությանը մասնակցող քաղաքացիների համար մատերը թանաքոտելու գործառույթն իրականացնել:

Պարոն Մուկուչյանից հետաքրքրվեցինք, թե արդյոք ընտրված տարբերակը լավագույնն էր, ինչին ի պատասխան ԿԸՀ նախագահը նկատեց, որ առաջին հերթին պետք էր այնպես անել, որ ընտրական իրավունքից զրկված քաղաքացիները մասնակցեին քվեարկությանը և դրա վերաբերյալ խորհրդարանում կար միասնական դիրքորոշում:

Խնդիրը, ըստ Տիգրան Մուկուչյանի, վերահսկողությունն է, իսկ վերահսկողությունն իրականացվելու է Ընտրական օրենսգրքով ամրագրված կանոնակարգումների օգնությամբ՝ տեղամասային կենտրոններում ցուցակների հրապարակայնություն, տեղամասային հանձնաժողովների ձևավորման մոտեցում՝ երբ յուրաքանչյուր խմբակցություն ունի մեկ ներկայացուցիչ և վերջապես՝ վստահված անձանց, դիտորդների, լրագրողների ներկայությունը ընտրական տեղամասերում:

**«Մեխանիզմներն են, որոնք թույլ են տալիս ընտրական ողջ գործընթացը վերահսկել: Չպետք է մոռանալ մի բան՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների համար օրենքի պահանջներով քվեարկության կազմակերպումը պարտականություն է, դրա չկատարման համար նույնիսկ պատասխանատվություն է սահմանված և տվյալ պարագայում չի կարելի առաջնորդվել մեղավորության կանխավարկածով ու ի սկզբանե դրսևորել վատ վերաբերմունք այդ հանձնաժողովների աշխատանքների նկատմամբ: Նրանք հանձնաժողովներ են, որոնք կազմակերպում են քվեարկության գործընթացը և իրենք առավել, քան որևէ մեկը պարտավոր են տեղյակ լինել իրենց իրավունքներին ու պարտականություններին»**, - հավելեց Տիգրան Մուկուչյանը:

Նույնականացման քարտերով առաջին քվեարկությունը, Տիգրան Մուկուչյանը վստահ է, կանցնի առանց խոչընդոտների: Մեր դիտարկմանը, թե ID քարտերով քվեարկության նկատմամբ արդեն իսկ կա անվստահություն, ինչի մասին բազմիցս հայտարարվեց խորհրդարանում օրինագծի քննարկման ժամանակ, Մուկուչյանը նկատեց, որ աշխարհի շատ երկրներում նման քարտերով քվեարկություններ կատարում են ու որևէ խոչընդոտ չի առաջանում: Նրա խոսքով, առավել անվստահություն կարող էր առաջացնել մատների թանաքոտման տարբերակը կիրառելու դեպքում, ինչն առաջարկում էր ընդդիմությունը: **«Ընտրություններում օգտագործվող թանաքանյութը հայտնի է, որ կենցաղային շփման ժամանակ անցնում է ձեռքից ձեռք, այսինքն քվեարկությանը մասնակցած անձը ձեռքով կարող է բարևել մեկին, որը չի մասնակցել քվեարկության ու վերջինն էլ գալով տեղամաս հայտնաբերվի, որ նրա ձեռքին արդեն իսկ կա թանաքանյութ: Ի՞նչ անել: Խնդիրներ առաջանում են և դրանում համոզվել են շատ երկրներ: Մեր երկրում քվեարկության գործընթացը վերահսկելի է ու հրապարակային և օտար մեթոդները վերցնելն ու մեխանիկորեն կիրառելը կարող են խնդիրներ առաջացնել »**, - բացատրեց ԿԸՀ նախագահը՝ նկատելով, որ նման խնդիրներից խուսափելու համար էլ ընտրվել է ավելի հեշտ ու վերահսկելի գործընթաց: